Ողջույն , հարգելի՛ ներկաներ :

Մենք ներկայացնում ենք Երևանի Ստեփան Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոցը: Սովորում ենք 9-րդ դասարանում : Աշխատաժողովին ներկայացնելու ենք նախագծային աշխատանք, որը վերաբերում է հայերենի տարատեսակ աղավաղումներին , բերականական , բառագործածական , շարադասության և ոճական սխալներին , լատինատառ հայերենին և այլն: Թեման, ինչ խոսք, նորություն չէ և վստահաբար հուզում է յուրաքանչյուրին , ում համար միևնույն չէ հայերենի աղետալի վիճակը ներկայումս :

Աշխատանքի ընթացքում շրջեցինք Երևանի փողոցներում, նկատեցինք գովազդային վահանակներ, հայտարարություններ, ուսումնասիրեցինք համացանցի և հեռուստաթերթերի լեզուն: Հավաքվեց հսկայական նյութ, որի մի փոքր մասը ներկայացրել ենք սահիկաշարում (սահիկաշարի հղումը՝ վերջում) :

Կրթությանը մոտ կանգնած յուրաքանչյուր անհատ գիտի, որ վերջին տարիներին հատկապես շատ է խոսվում հայերենի իմացության ոչ բավարար մակարդակի մասին : Դպրոցական և բուհական քննությունների արդյունքները երբեմն շատ մտահոգիչ են: Հարց է առաջանում՝ ինչու՛ է այդպես , չէ՞ որ հայերենը մեր մայրենի լեզուն է, և թվում է, թե այդ լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցումը բնականորեն և առանց ջանքերի պետք է հաջողվի:

Արի ու տես , որ դպրոցում մենք ականատես ենք լինում բոլորովին այլ պատկերի (կարծում ենք՝ ներկա դպրոցականներից շատերը կհաստատեն դա). աշակերտը որևէ օտար լեզու սովորում է ավելի հեշտ և բարձր առաջադիմությամբ, քան իր մայրենի լեզուն: Ցավալի է , բայց մենք հաճախ հասակակիցներից լսում ենք. «Ավելի լավ ա հարյուր անգամ անգլերենի քննություն տամ, քան մի անգամ՝ հայերենի»:

Փորձեցինք հասկանալ, թե ինչու է այդպես: Առանձնացրինք մի քանի էական պատճառ, որոնք ուզում ենք ներկայացնել ձեր ուշադրությանը:

1-ին պատճառ՝ ընտանիք , միջավայր

Հայտնի խոսք է ՝ ընտանիքը պետության հիմքն է:

Իսկ ի՞նչ դեր է կատարում այսօր ընտանիքը երեխայի ձևավորման գործում: Մենք այս թեմայով զրուցել ենք բավական մեծ թվով պատանիների հետ: Հարցադրումները այսպիսին էին՝ ինչ մշակութային օջախներ են այցելել ծնողների հետ , արդյոք ծնողները իրենց համար կարդացել են գրքեր մանկության տարիներին, արդյոք ծնողները հիմա ուղղորդում են իրենց , թե ինչ կարդան , ինչ դիտեն կամ ինչ լսեն:

Հարցմանը մասնակցած պատանիների զգալի մասը գերադասում էր հանգստի և ժամանցի վայրերը մշակութային օջախներից , իսկ ծնողները, պարզվեց, հիմնականում զբաղված են և չեն վերահսկում իրենց երեխաների նախասիրությունների ձևավորումը: Եվ թե ինչ են դիտում, լսում երեխաները, կարծում ենք՝ պարզ է :

2-րդ պատճառ՝ դասագրքեր և ծրագրեր

Մեր փորձից գիտենք , որ հայոց լեզվի և գրականության դասագրքերը գրված են բարդ ու անկենդան լեզվով : Քանի որ ներկաներդ ևս ծանոթ եք այդ դասագրքերի բովանդակությանը, շարադրանքին և առաջադրանքների բնույթին , ուստի չենք մանրամասնի : Կասենք միայն , որ դասերը շատ հետաքրքիր և արդյունավետ են լինում , երբ մեր ուսուցիչը մի

կողմ է դնում դասագիրքը և դասն անցկացնում է ազատ ձևաչափով, երևակայություն և կարողություններ զարգացնող գործնական տարբեր առաջադրանքներով:

Գաղտնիք չէ, որ նույնիսկ գերազանց առաջադիմություն ունեցող , անթերի թեստ գրող շատ աշակերտներ դժվարանում են կառուցել խոսք, ինչ-որ բանի մասին իրենց կարծիքը շարադրել հստակ և գրագետ: Պատճառը՝ սովորելու ընթացքում մենք ավելի շատ ժամանակ ենք հատկացնում բերականություն անգիր անելուն և շատ քիչ՝ լեզվամտածողության զարգացմանը: Խնդրի լուծման ուղիներից մեկը ՝ հիմնովին վերանայել դպրոցական ծրագրերն ու դասագրքերը:

Եվ քանի որ այժմ արդեն կրթության հիմքում կարողունակությունների զարգացումն է դրվում, հույս ունենք , որ մոտ ապագայում այս խնդրին լուծում կտրվի:

3-րդ պատճառ՝ Ձանգվածային լրատվամիջոցներ

Մեր օրերում ոչինչ այնքան չի զբաղեցնում մարդուն, որքան համացանցը և հեռուստացույցը: Հատկապես համացանցում 21-րդ դարի մարդը ծախսում է իր օրվա մի զգալի մասը: Եվ եթե մարդը շարունակ կարդում է անգրագետ գրված կամ լատինատառ տեքստեր, եթե լսում է երգեր , որոնք դժվար է երգ անվանել, եթե դիտում է ֆիլմեր և հոլովակներ , որոնք լի են սխալներով և ժարգոնային արտահայտություններով , էլ այդ մարդուց ինչպե՞ս պահանջես , որ խոսի հայերեն , մտքերը շարադրի հասկանալի և կիրթ: Ի վերջո, այն , ինչ անընդհատ , ամեն օր հանդիպում է , դառնում է սովորական և օրինաչափ: Այդպես էլ մեր լեզվում տեղ են գտնում կզանգվենք, տուժվեցի, մենակով , ստեսցյուն ձեզ, մեռսի շատ և նման հազարավոր բառեր ու արտահայտություններ:

,Ինչ ենք առաջարկում մենք:

1 Բոլոր հնարավոր միջոցներով գիրքը պետք է դարձնել մեր կյանքի անբաժան մասը:

2. Որքան էլ զբաղված լինեն , ծնողները պարտավոր են հետևելու , որ իրենց երեխաները հեռու մնան անգրագետ և անճաշակ եթերից:

3. Մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի լեզվի աղավաղման վատ հետևանքները և իր ուժերի սահմաններում պայքարի դրա դեմ :

4, Եվ , իհարկե, այս ամենի մեջ որոշիչ դեր ունի պետությունը. պետք է խիստ միջոցներ ձեռք առնել , որպեսզի արգելվի անգրագիտություն սփռող լրատվամիջոցների և հեռուսաալիքների գործունեությունը:

Մենք փորձեցինք շատ կարճ ներկայացնել մի թեմա, որն իրականում շատ ծավալուն է, ուստի անհնար է լիարժեք քննարկել մեկ զեկուցման մեջ :

Շնորհակալություն ենք հայտնում այս հիանալի նախաձեռնության կազմակերպիչներին , որ հնարավորություն ընձեռեցին խոսելու մեզ հուզող հարցերի մասին:

https://www.canva.com/design/DAE4ic2uMmo/Ad07nQs-2Hm_AO7LYuqABA/edit?utm_content=DAE4ic2uMmo&utm_campaign=designshare&utm_medium=link2&utm_source=sharebutton